Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ

Հավելված
«Փրկարարական ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի

Կ Ա Ն Ո Ն Ա Գ Ի Ր Ք

ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ

Բ Ա Ժ Ի Ն 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Փրկարարական ծառայության կանոնագիրքը

1. Սույն կանոնագրքով կարգավորվում են փրկարարական ծառայության կազմակերպման և անցկացման, փրկարարական աշխատանքների և մարտական առաջադրանքների ղեկավարման ու իրականացման, տեղեկատվության հաղորդման կարգը, փրկարարական ծառայողների իրավունքները և պարտականությունները, խրախուսանքները, կարգապահական և նյութական պատասխանատվության ու դրանց կիրառման հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև ծառայության անցման հետ կապված այլ հարաբերություններ:

2. Սույն կանոնագրքի պահանջները տարածվում են ներքին գործերի բնագավառում պետական կառավարման~~արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության ոլորտի~~ լիազոր մարմնի (այսուհետ՝ լիազոր մարմին) համակարգում կամ կառավարման ոլորտում գործող բոլոր փրկարարական ստորաբաժանումների, այդ թվում՝ պետական ոչ առևտրային կազմակերպությունների, փրկարարական ստորաբաժանումների վրա:

3. Բացի սույն հոդվածի 2-րդ մասում նշված փրկարար ուժերից, սույն կանոնագրքի փրկարարական աշխատանքների կատարմանը վերաբերող պահանջները տարածվում են լիազոր մարմնի Փրկարար ծառայության ստորաբաժանումների հետ փրկարարական աշխատանքներ իրականացնող մասնագիտացված և կամավոր փրկարար ուժերի վրա:

4. Միևնույն կայազորի տարածքում տեղակայված լիազոր մարմնի Փրկարար ծառայության և Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ստորաբաժանումների միջև փոխհամագործակցության կարգը սահմանվում է լիազոր մարմնի ղեկավարի ու պաշտպանության նախարարի համատեղ հրամանով: